ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/58

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Բողոք բերող՝ «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Է. Չատինայն Հովհաննիսյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21» ծածկագրով բաց մրցույթ, ՋՋԷՌ-440 (Վ-270) տիպի ռեակտորային կայանքով Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի սարքավորումների և խողովակաշարերի հիմնական մետաղի, եռակցվածքների և մակահալվածքների վիճակի՝ շահագործման երկարացված ժամկետի ընթացքում շահագործական վերահսկման տիպային ծրագրի մշակման ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 30.06.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել՝

1. դադարեցնել թիվ «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. հունիսի 4-ի թվագրմամբ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը,
2. դադարեցնել թիվ «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. հունիսի 2-ի թվագրմամբ թիվ 3 արձանագրության 3-րդ կետով որոշումը,
3. պարտավորեցնել պատվիրատուին և/կամ լիազոր մարմնին չգանձել թիվ «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը,
4. պարտավորեցնել պատվիրատուին թիվ «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքել «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի հետ:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 28.06.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 30.06.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/10672-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է՝ բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 30.06.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը, որը նույն օրը մակագրվել է Բողոքներ քննող անձին:

01.07.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/58 համարի ծածկագիրը:

08.07.2021թ.-ին, 16.07.2021թ.-ին և 23.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 16.07.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 23.07.2021թ.-ին:

2. «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն 30.06.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ «ՋՋԷՌ-440 (Վ-270) տիպի ռեակտորային կայանքով Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի սարքավորումների և խողովակաշարերի հիմնական մետաղի, եռակցվածքների և մակահալվածքների վիճակի՝ շահագործման երկարացված ժամկետի ընթացքում շահագործական վերահսկման տիպային ծրագրի մշակման» ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2021թ. հունիսի 2-ի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշման դեմ/

1. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ «ՋՋԷՌ-440 (Վ-270) տիպի ռեակտորային կայանքով Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի սարքավորումների և խողովակաշարերի հիմնական մետաղի, եռակցվածքների և մակահալվածքների վիճակի՝ շահագործման երկարացված ժամկետի ընթացքում շահագործական վերահսկման տիպային ծրագրի մշակման» ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարվել է թիվ «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21» ծածկագրով բաց մրցույթ:

2. Մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել միայն «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն:

3. «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հայտի ապահովում:

4. 2021թ. ապրիլի 12-ին գնահատող հանձնաժողովը կայացրել է թիվ 2 արձանագրությունը, որի 6-րդ կետով բավարար է գնահատել «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

5. Նույն արձանագրության 9-րդ կետով նշվել է՝ Փաստաթղթերի գնահատման արդյունքում «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից և առաջարկել կնքել ՋՋԷՌ-440 (Վ-270) տիպի ռեակտորային կայանքով ՀԱՅԿԱԿԱՆ ԱԷԿ-Ի թիվ 2 էներգաբլոկի սարքավորումների և խողովակաշարերի հիմնական մետաղի, եռակցվածքների և մակահալվածքների վիճակի՝ շահագործման երկարացված ժամկետի ընթացքում շահագործական վերահսկման տիպային ծրագրի մշակում» ծառայության մատուցման պայմանագիր:

6. 2021թ. ապրիլի 13-ին գնահատող հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին հայտարարություն:

7. 2021թ. ապրիլի 19-ին պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը Պատվիրատու «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն ուղարկել է «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ին:

8. Ռուսաստանի Դաշնության Նախագահի 23.04.2021թ. թիվ 242 հրամանով ՌԴ-ում 2021թ. մայիսի 1-ից մինչև 2021թ. մայիսի 10-ը հայտարարվել է ոչ աշխատանքային օրեր:

9. 2021թ. մայիսի 11-ին Պայմանագրի ստորագրված տարբերակը և բանկային երաշխիքները «ՌուսԱտոմէկսպերտիզա» ՍՊԸ-ն ուղարկել է Պատվիրատու «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին:

10. 2021թ. հունիսի 2-ին գնահատող հանձնաժողովը կայացրել է թիվ 3 արձանագրությունը, որի 3-րդ կետով նշել է, որ սահմանված ժամկետում պայմանագրի ստորագրված տարբերակը և պայմանագրի ու որակավորման ապահովումները չի ներկաացվել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին: Ուղղորդվելով Գնումների մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով և 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետերով գնահատող հանձնաժողովը որոշել է գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

11. 2021թ. հունիսի 4-ին Գնահատող հանձնաժողովի կողմից հրապարակվել է չկայացած գնման ընթացակարգի մասին հայտարարություն՝ այն հիմնավորմամբ, որ սահմանված ժամկետում պայմանագիր չի ներկայացվել:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի՝ Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու գնահատող հանձնաժողովի .... և որոշումները:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: ...

Տվյալ դեպքում թիվ «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21» ծածկագրով մրցույթի շրջանակում Պատվիրատու «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը «ՌուսԱտոմէկսպերտիզա» ՍՊԸ-ին ուղարկել է 19.04.2021թ./Հիմք՝ 02.06.2021թ. թիվ 3 արձանագրություն/ :

Համաձայն վերը նշված հոդվածների «ՌուսԱտոմէկսպերտիզա» ՍՊԸ-ն չի խախտել ՀՀ օրենսդրությամբ սահմանված և իր կողմից ստանձնած պարտականությունները և հետևաբար բացակայում է վերջինիս հայտը մերժելու անհրաժեշտությունը:

2. Ինչպես արդեն նշեցի, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը Պատվիրատու «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն «ՌուսԱտոմէկսպերտիզա» ՍՊԸ-ին ուղարկել է 19.04.2021թ.:

Պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո 3-րդ աշխատանքային օրը ՌԴ-ում գործունեություն ծավալող

«ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն բանկային երաշխիք ստանալու նպատակով դիմել է «ՍՈՎԿՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին:

Ռուսաստանի Դաշնության Նախագահի 23.04.2021թ. թիվ 242 հրամանով ՌԴ-ում 2021թ. մայիսի 1-ից մինչև 2021թ. մայիսի 10-ը հայտարարվել է ոչ աշխատանքային օրեր:

Ոչ աշխատանքային օրերի հետևանքով «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն հնարավորություն չի ունեցել է «ՍՈՎԿՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ից ստանալ բանկային երաշխիքների բնօրինակները:

Ոչ աշխատանքային օրերին հաջորդող հենց առաջին իսկ աշխատանքային օրը՝ 11.05.2021թ. «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն է «ՍՈՎԿՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ից վերցրել է բանկային երաշխիքները և անմիջապես նույն օրը ներկայացրել է Պատվիրատուին, սակայն Պատվիրատուն հայտարարել է, որ պայմանագիրը և բանկային երաշխիքները սահմանված ժամկետում չի ներկայացվել:

Ըստ էության Պատվիրատուն առաջնորդվել է Գնումների մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով, ըստ որի՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Որպեսզի հնարավոր լինի հասկանալ վերը նշված նորմի պահանջը և հետևաբար գնահատել նաև հանձնաժողովի գործողությունները, նախևառաջ անհրաժեշտ է հասկանալ օրենսդրի նպատակը, ինչպիսի պահանջը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 41-րդ հոդվածից:

Այսպես՝

Օրենսդիրը գտել է, որ պայմանագրի և որակավորման ապահովում ներկայացնելու, ինչպես նաև պայմանագիրը ստորագրելու համար ընտրված մասնակցին պետք է տրամադրել ԼԻԱԺԵՔ 10 աշխատանքային օր ժամանակ:

Պետք է նկատել, որ սույն գործով ընտրված մասնակիցը ոչ թե Հայաստանի Հանրապետությունում գործունեություն ծավալող ընկերություն է, այլ Ռուսաստանի Դաշնությունում: Ու որպեսզի մասնակցին տրամադրվի ԼԻԱԺԵՔ 10 աշխատանքային օր ժամանակ, պետք է հաշվի առնվի ոչ թե Հայաստանի Հանարպետությունում գործող աշխատանքային օրերը, այլ ՌԴ-ում, քանի որ բանկային երաշխիքները ստանալու համար ընտրված մասնակիցը պետք է դիմի ոչ թե ՀՀ-ում գործող բանկին, այլ ՌԴ-ում:

Այնինչ սույն գործով գնահատող հանձնաժողովը փաստացի սահմանափակել է «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի ԼԻԱԺԵՔ 10 աշխատանքային օրյա ժամկետը, որի

հետևանքով բացասական հետևանքները կրել է ընտրված մասնակիցը, ուստի գտնում եմ, որ այս խնդրի մասով իր իրավական գնահատականը պետք է հայտնի ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը:

Բացի այդ գտնում եմ նաև, որ անգամ եթե գնահատող հանձնաժողովը հիմք է ընդունել ՀՀ-ում գործող աշխատանքային օրերի հաշվարկը, ապա միևնույն է «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն չի կարող ենթարկվել որևէ պատասխանատվության հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի՝ Պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Տվյալ դեպքում պայմանագրի և որակավորման ապահովումները «սահմանված ժամկետում» չներկայացնելու, հետևաբար նաև պայմանագիրը «սահմանված ժամկետում» չստորագրելու փաստի հիմքում բացակայել է «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի մեղքը, քանի որ ՌԴ նախագահի հրամանագրով 01.05.2021թ.-10.05.2021թ. ՌԴ-ում հայտարարվել են ոչ աշխատանքային օրեր, իսկ ինչպես հայտնի է «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն հանդիսանում է Ռուսաստանի Դաշնության ռեզիդենտ ընկերություն և տվյալ դեպքում իր գործելու հնարավորությունը սահմանափակվել է գործադիր մարմնի կողմից ընդունած որոշմամբ:

Ավելին՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

Մի շարք գործերով ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է՝ Դրա հետ մեկտեղ օրենսդիրն ընդհանուր կանոնից նախատեսել է որոշակի բացառություն, որի դեպքում պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի

հետևանքով: Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3- րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում: /Տես՝ ՀՀ վճռաբեկ դատարանի ԵԷԴ/0888/02/14 որոշում/:

Կարծում եմ, անհրաժեշտություն չկա հիմնավորելու, որ ՌԴ-ում օրենսդրական մակարդակով 01.05.2021թ.-10.05.2021թ. ոչ աշխատանքային օրեր հայտարարելը բացառիկ դեպք էր և «ՌուսԱտոմէկսպերտիզա» ՍՊԸ-ն որևէ կերպ չէր կարող ո՛չ ազդել այդ որոշման վրա, ո՛չ հաղթահարել այդ անկանխելի հանգամանքը և ո՛չ էլ նախապես կանխատեսել, որ ՌԴ նախագահը ընդունելու է նման բովանդակությամբ հրաման:

Այստեղ տեղին է հիշատակել, որ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Տվյալ դեպքում «ՌուսԱտոմէկսպերտիզա» ՍՊԸ-ն ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները, չի ցուցաբերել անգործություն, Պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո ընդամենը 2 օրվա ընթացքում հավաքագրել է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և 3-րդ օրը հանձնել է բանկին, որից հետո փաստացի Բանկից բանկային երաշխիքները ստացել է միայն 11.05.2021թ. ու նույն օրն էլ պայմանագրի ստորագրված տարբերակը բանկային երաշխիքների հետ միասին ներկայացրել է Պատվիրատուին:

Այսինքն, մայր օրենքի ուժով «ՌուսԱտոմէկսպերտիզա» ՍՊԸ-ն չի կարող որևէ պատասխանատվության ենթարկվել, քանի որ պարտավորությունը «խախտելու» համար բացակայել է «ՌուսԱտոմէկսպերտիզա» ՍՊԸ-ի մեղքը ու այս պայմաններում չի կարող անտեսվել «ԱՌԱՆՑ ՄԵՂՔԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԱՐԳԵԼՔԻ ՍԿԶԲՈՒՆՔԸ»:

Այլ կերպ՝ արձանագրում եմ որ սույն վեճն ըստ էության ներառում է իրավունքի իրացման համար օրենսդրությամբ սահմանված ժամկետի բացթողնման դեպք, քանի որ օրենսդիրը սահմանել է որևէ գործողություն իրականացնելու ժամկետ, սակայն օրենսդրությամբ չի սահմանել նշված ժամկետի վերականգնման հստակ իրավական

հնարավորություն, ավելին պայմանագրի և որակավորման ապահովումների, ինչպես նաև պայմանագրի ստորագրված փարբերակի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով չներկայացնելու դեպքում անձի համար ստեղծել է անբարենպաստ հետևանքներ:

Պնդում եմ, որ ցանկացած դեպքում ժամկետի բացթողնման հանգամանքն անհրաժեշտ է դիտարկել սուբյեկտի իրավունքների գերակայության լույսի ներքո:

Փաստում եմ, որ համանման տեսակետից բխող դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ սահմանադրական դատարանն իր 01.10.2019թ. թիվ ՍԴՈ-1479 որոշմամբ: Մասնավորապես՝ ՀՀ սահմանադրական դատարանը արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «. . . սույն գործով վիճարկվող դրույթները տրանսպորտային միջոցին առնչվող գործարքի գրանցման համար նման ուղղակի արգելք չեն սահմանում և իրավունքի գերակայության սկզբունքին համապատասխան՝ անձի սեփականության սահմանադրական իրավունքի պաշտպանությունն ապահովելու համար, հարգելի պատճառների առկայության դեպքում բաց թողնված ժամկետը կարող է վերականգնվել:»:

Ավելին ՀՀ սահմանադրական դատարանը 19.03.2019թ. թիվ ՍԴՈ-1448 որոշմամբ՝ հակասահմանադրական ճանաչելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասը, նշել է՝ Օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերությունը, որին հղում է արվում 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում, անվավեր կամ առոչինչ է ճանաչում անշարժ գույքի վերաբերյալ բոլոր այն գործարքները, որոնցից բխող իրավունքները կնքման պահից սկսած 30 աշխատանքային օրվա ընթացքում չեն ներկայացվում պետական գրանցման:Օրենսդրական այս կարգավորումների արդյունքում սահմանափակվում է անձի՝ Սահմանադրությամբ ամրագրված սեփականության իրավունքը, քանի որ 30 աշխատանքային օրվա ժամկետը բաց թողնելուց հետո նա այլևս չի կարող իր կողմից արդեն իսկ կնքված գործարքի միջոցով ձեռք բերել սեփականության իրավունք: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից սահմանված կարգավորումն անհրաժեշտ չէ, քանի որ որպես ավելի մեղմ միջոց Օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասում կարող էր նախատեսվել դրույթ՝ ժամկետը բաց թողնելը վերականգնելու վերաբերյալ, եթե բաց թողնելը տեղի էր ունեցել առանց անձի մեղքի:

Անկախ այն հանգամանքից, թե ՀՀ սահմանադրական դատարանը վերը նշված որոշումներով ո՞ր հոդվածների սահմանադրականության հարցն է քննարկել, էական է այն հանգամանքը, որ ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ իրավունքների իրացման կարգերը կարող են պարունակել որոշակի ձևական պայմաններ, որոնք, սակայն, չպետք է լինեն այն ծավալով, որ անարդյունավետ դարձնեն այդ իրավունքների իրացումը,

խեղաթյուրեն դրանց էությունը կամ վերածվեն իրավունքի այնպիսի սահմանափակման, որը չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ:

ՀՀ սահմանադրական դատարանի վերը նշված որոշումների իրավական մեկնաբանությունները լայնորեն կիրառվում են ՀՀ դատական ատյանների կողմից, ինչպիսիք են ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/3138/05/20 վարչական գործով 2020թ. դեկտեմբերի 4-ին կայացված վճիռը, թիվ ՎԴ/3061/05/20 վարչական գործով 2020թ. օգոստոսի 8-ին կայացված վճիռը:

Այսպիսով, վերոգրյալը հաշվի առնելով գալիս եմ այն եզրահանգման, որ թեև Գնումների մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ նախատեսված է հստակ ժամկետ և տրված չէ նշված ժամկետը վերականգնելու իրավական հնարավորություն, այնուամենայնիվ այն ենթակա է վերականգման բացթողնման համապատասխան պատճառների օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի գնահատման համակցությամբ, ինչը սույն գործով առկա է եղել և օբյեկտիվ գնահատման դեպքում պետք է ճանաչվեր հարգելի:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել՝

1. դադարեցնել թիվ «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. հունիսի 4-ի թվագրմամբ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը,

2. դադարեցնել թիվ «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. հունիսի 2-ի թվագրմամբ թիվ 3 արձանագրության 3-րդ կետով որոշումը,

3. պարտավորեցնել պատվիրատուին և/կամ լիազոր մարմնին չգանձել թիվ «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը,

4. պարտավորեցնել պատվիրատուին թիվ «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքել «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի հետ:

«ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն 08.07.2021թ.-ի ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ի լրումն թիվ «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21» ծածկագրով բաց մրցույթ շրջանակում նախկինում ներկայացված բողոքի հայտնում եմ նաև հետևյալը՝

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի՝ 1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի՝ Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը /պարոն Լ.Օհանյան/ թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/119» ծածկագրով գնման գործընթացի շրջանակում կայացված ԳԲՔԱ-Լ0-2021/45 որոշմամբ հայտնել է հետևյալը՝ Վերը նշված հովածների տառացի մեկնաբանությունից հետևում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը: Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա

օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Այսինքն, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իր որոշմամբ վերահաստատել է այն կարևորը, որ գնման գործընթացին մասնակցող յուրաքանչյուր անձ անկախ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից ունի այն նույն հավասար իրավունքը, ինչ ՀՀ ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

Ավելին Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ.Օհանյանը նույն ԳԲՔԱ-ԼՕ-2021/45 որոշմամբ հայտնել է նաև հետևյալը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենսդիրը, պայմանագրի ապահովում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 10 աշխատանքային օր ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ պայմանագրի և որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորությունները: Ուստի Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից պայմանագիր կնքելուց հրաժարվելու մասին:

Այսինքն, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ.Օհանյանը նույնպես գտել է, որ յուրաքանչյուր մասնակցի պետք է տրվի լիարժեք 10 աշխատանքային օրյա ժամկետ և միայն այն դեպքում անձը կարող է կրել Գնումների մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով սահմանված պատասխանատվության միջոցները, եթե լիարժեք 10 աշխատանքային օրյա ժամկետում չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը և/կամ կատարել է այնպիսի գործողություն, որը վկայում է վերջինիս կողմից պայմանագիր կնքելուց հրաժարվելու մասին:

Նշված իրավական վերլուծության լույսի ներքո դիտարկելով սույն գործի փաստերը գտնում եմ, որ սույն գործով «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ին չի տրվել լիարժեք 10 աշխատանքային օր ժամանակ, պահանջ է ներկայացվել ՌԴ-ից բերել համապատասխան բանկային երաշխիքներ, սակայն հաշվի չի առնվել ՌԴ-ի օրենսդրությամբ սահմանված աշխատանքային ժամկետները, ինչի հետևանքով չի ապահովվել գնման գործընթացի մասնակից օտարերկրյա իրավաբանական անձի գնման գործընթացին մասնակցելիս հավասարությանսկբունքի ապահովման իրավունքը:»:

«ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն 19.07.2021թ.-ի ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ի լրումն թիվ «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21» ծածկագրով բաց մրցույթ շրջանակում նախկինում ներկայացված բողոքի հայտնում եմ նաև հետևյալը՝

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի՝ Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Վերը նշված հոդվածների փառացի մեկնաբանությունից հետևում է, որ օրենսդիրն օգտագործել է հետևյալ տերմինները՝

- *Պայմանագիրը կնքել*
- *Պայմանագրի ապահովումը ներկայացնել:*

Ընդ որում ո՛չ «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ո՛չ էլ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ սահմանված չէ, թե ե՞րբ է պայմանագիրը համարվում կնքված, ի՞նչ եղանակով պետք է ներկայացվի պայմանագրի և արակավորման ապահովումները և պայմանագիրը:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 4-րդ մասի՝ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Պայմանագիրը գրավոր ձևով կարող է կնքվել կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու, ինչպես նաև փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով տեղեկություն կամ հաղորդագրություն (փաստաթուղթ) փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է պայմանագրի կողմից:

Տվյալ դեպքում սույն գործով «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն Գնումների մասին ՀՀ օրենքի 35-րդ և 36-րդ հոդվածով սահմանված կարգով 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել է պայմանագիրը և սահմանված ժամկետում՝ 11.05.2021թ., էլեկտրոնային փոստի միջոցով փաստաթղթերն, այլ կերպ պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները, ներկայացրել է պատվիրատուին:

Պետք է նշեմ, որ էլեկտրոնային հաղորդակցության կամ որ նույն է էլեկտրոնային փոստի միջոցով փաստաթղթերը ուղարկելը ոչ միայն իրավաչափ է

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով, այլ նաև գործարար շրջանառության սովորույթի ուժով:

Այսպես՝

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 7-րդ հոդվածի՝ Գործարար շրջանառության սովորույթ է համարվում ձեռնարկատիրական գործունեության որևէ բնագավառում ձևավորված և լայնորեն կիրառվող օրենսդրությամբ չնախատեսված վարքագծի կանոնը, անկախ դրա՝ որևէ փաստաթղթում ամրագրման հանգամանքից:

Տվյալ դեպքում հանրահայտ և չվիճարկվող փաստ է, որ գնման գործընթացի շրջանակներում բոլոր պատվիրատուները մասնավորապես, և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն հատկապես օտարերկրյա անձանց հետ հաղորդակցվում, փաստաթղթերը փոխանակում է էլեկտրոնային փոստի միջոցով:

Պետք է նշեմ նաև, որ սույն գնման գործընթացի շրջանակում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն գրեթե բոլոր գրագրությունները «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի հետ իրականացրել է էլեկտրոնային փոստի միջոցով, ինչից էլ հետևում է, այս ոլորտում ձևավորվել է փոաստաթղթերը էլեկտրոնային փոստի միջոցով փոխանակելու կայուն սովորույթ՝ վարքագծի կանոն:

Գործարար շրջանառության սովորույթն իրավաբանորեն ճանաչված կատեգորիա է և օրենսդիրը թույլատրում է այն հարաբերությունների նկատմամբ, որոնք կարգավորված չեն օրենքով, կիրառել գործարար շրջանառության սովորույթներ:

Ավելին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Այն դեպքերում, երբ սույն օրենսգրքի 1 հոդվածում նախատեսված հարաբերություններն ուղղակիորեն կարգավորված չեն օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, և բացակայում է դրանց նկատմամբ կիրառելի գործարար շրջանառության սովորույթը, նման հարաբերությունների նկատմամբ, եթե դա չի հակասում դրանց էությանը, կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող քաղաքացիական օրենսդրության նորմերը (օրենքի անալոգիա):

Այսինքն, օրենսդիրը գտել է, որ մինչև օրենքի անալոգիայի կիրառումը պետք է հասկանալ առկա է արդյո՞ք կիրառելի գործարար շրջանառության սովորույթ, թե ոչ:

Տվյալ դեպքում սույն գործով «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ օրենսդրությամբ կարգավորված չէ պայմանագրի և որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու կարգը, և նկատի ունենալով լայնորեն կիրառված գործարար շրջանառության սովորույթը, 11.05.2021թ. էլեկտրոնային փոստի միջոցով փաստաթղթերը նրկայացրել է Պատվիրատուին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

Այսինքն, օրեսդիրը գործարար շրջանառության սովորույթներին համապատասխան կատարված պարտավորությունը դիտարկում է որպես պատշաճ կատարում, ինչից էլ հետևում է, որ «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն իր կողմից ստանձնած բոլոր պարտավորությունները կատարել է պատշաճ կարգով:

Այնուամենայնիվ, բացի կիրառելի գործարար շրջանառության սովորույթի առկայությունից, ցանկանում եմ նաև կատարել համանման հարաբերություններ կարգավորող նորմերի համեմատություն (օրենքի անալոգիա):

Համաձայն Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի՝ Եթե օրենսդրության մեջ բացակայում է կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմը, սակայն օրենսդրությամբ սահմանված է համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմ, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ (եթե դա չի հակասում դրանց էությանը) կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող իրավական նորմերը (օրենքի անալոգիա):

Տվյալ դեպքում չնայած ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ սահմանված չէ պայմանագրի և որակավորման ապահովումներ ներկայացնելու կարգը, սակայն սահմանված է հայտի ապահովում ներկայացնելու կարգը: Այսպես՝

Համաձայն ՀՀ կատավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշման 32-րդ մասի 1-ին կետի ե/ ենթակետի՝ …Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ,:

Ասինքն օրենսդիրը սահմանել է, որ հայտի ապահովումը կարող է ներկայացվել էլեկտրոնային եղանակով՝ սկանավորված տարբերակով, հետագայում բնօրինակը ներկայացնելու պայմանով:

Նույն տրամաբանությամբ ընտրված մասնակիցը, այն էլ ոչ ռեզիդենտ մասնակիցը, պայմանագրի և որակավորման ապահովումները կարող են ուղարկել էլեկտրոնային եղանակով՝ սկանավորված տարբերակով, հետագայում բնօրինակը ներկայացնելու պայմանով, ինչը և կատարել է «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն:

Ցանկանում եմ նշել նաև, որ եթե ընտրված մասնակիցը հետագայում բնօրինակները չներկայացնի կամ պարզվի, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), ապա այդ դեպքում Պատվիրատուն իրավունք ունի պայմանագիրը միակողմանի լուծել/ Հիմք՝ ՀՀ կատավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշման 33-րդ մասի 8-րդ կետ/:

Ամփոփելով վերոգրյալը և պնդելով նախկինում ներկայացված բողոքներս հայտնում եմ, որ «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն օրենքով իրեն տրամադրված լիարժեք 10 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ կարգով ստորագրել, կնքել է պայմանագիրը և պայմանագրի ու որակավորման ապահովումները էլեկտրոնային հաղորդակցության /էլ. փոստի/ միջոցով փոխանցել է պատվիրատուին, ինչը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջից, ձևավորված և կայնորեն կիրառվող գործարար շրջանառության սովորույթից և համանման հարաբերությունները կարգավորող այլ նորմերի պահանջներից:»:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 01.07.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/10782-2021 գրությամբ դիմել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի կողմից 30.06.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 07.07.2021թ.-ին թիվ Ե/40/1758-21 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ООО «РусАтомЭкспертиза»-ի բողոքի քննության նպատակով Ձեր դիտարկմանն եմ ներկայացնում «Հայկական ատոմային էլեկտրակայան» Փակ Բաժնետիրական Ընկերության (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) գրավոր դիրքորոշումը:

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար ՋՋԷԳ-440 (Վ-270) տիպի ռեակտորային կայանքով Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի սարքավորումների և խողովակաշարերի հիմնական մետաղի, եռակցվածքների և մակահալվածքների վիճակի՝ շահագործման երկարացված ժամկետի ընթացքում շահագործական վերահսկման տիպային ծրագրի մշակման ծառայության ձեռք բերման նպատակով ս/թ մարտի 19-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21» ծածկագրով գնման ընթացակարգը (այսուհետ՝ ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել ООО «РусАтомЭкспертиза»:

ООО «РусАтомЭкспертиза» ընկերության կողմից ներկայացված մասնակցության հայտի գնահատման արդյունքում՝ գնահատող հանձնաժողովի՝ ս/թ ապրիլի 12-ի թիվ 2 որոշմամամբ ООО «РусАтомЭкспертиза» ճանաչվել է ընտրված մասնակից և ս/թ ապրիլի 19-ին ООО «РусАтомЭкспертиза» էլեկտրոնային հասցեին ուղարկվել է ООО «РусАтомЭкспертиза» և «ՀԱԷԿ» ՓԲԸ միջև կնքվող պայմանագրի նախագիծը: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ООО «РусАтомЭкспертиза» պայմանագիրը և պայմանագրի և որակավորման ապահովումները 10 աշխատանքային օրվա ընթացքում պետք է ներկայացներ «ՀԱԷԿ» ՓԲԸ (մինչև 03.05.2021թ. ներառյալ): Արձանագրելով, որ նշված ժամկետում ООО «РусАтомЭкспертиза» ընկերությունը պայմանագրի ստորագրված տարբերակը և պայմանագրի և որակավորման ապահովումները

չի ներկայացրել՝ ս/թ հունիսի 3-ին «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

Ի պատասխան բողոքաբերի այն հայտարարությանը, որ ՌԳ-ում հայտարարված տոնական ոչ աշխատանքային օրերի հետ կապված (ООО «РусАтомЭкспертиза» հանդիսանում է ՌԳ ռեզիդենտ) պայմանագրի ներկայացման ժամկետը լիարժեք 10 աշխատանքային օր չի կազմում՝ տեղեկացնում եմ Ձեզ, որ հանձնաժողովը առաջնորդվել է ՀՀ-ում գործող օրացույցով, քանի որ գնման ընթացակարգը հայտարարված է ՀՀ օրենսգրքով:

Ինչ վերաբերվում է հայտի ապահովման գանձմանը, ապա ս/թ հունիսի 10-ին «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն թիվ Ε/40/1480-21 գրությամբ ՀՀ ՖՆ-ին տեղեկացրել է գնման ընթացակարգի շրջանակներում ООО «РусАтомЭкспертиза» կողմից սպանձնած պարտավորությունների խախտման մասին:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարծում ենք, որ բողոքաբեր անձի բողոքը անհիմն է, քանի որ գնահատող հանձնաժողովը գործել է բացառապես «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ և այլ իրավական ակտերով սահմանված նորմերով՝ ապահովելով գնման գործընթացի մրցակցային, համաչափ և ոչ խտրական կազմակերպումը:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/58 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ՋՋԷՌ-440 (Վ-270) տիպի ռեակտորային կայանքով Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի սարքավորումների և խողովակաշարերի հիմնական մետաղի, եռակցվածքների և մակահալվածքների վիճակի՝ շահագործման երկարացված ժամկետի ընթացքում շահագործական վերահսկման տիպային ծրագրի մշակման ձեռքբերման նպատակով 19.03.2021թ.-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ կամ Մրցույթ):

ii. Մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել միայն «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն:

iii. «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով

սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iv. Նույն դիմում-հայտարարությամբ Ընկերությունը հայտնել է, որ հանդիսանում է ՌԴ ռեզիդենտ՝ նշելով գործունեության հասցեն՝ ք. Մոսկվա, Շարիկոպոդշիպնիկովսկայա փ., 4 շ., 9-րդ հատված, սենյակներ 5,5 Ա և 6:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 12.04.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

vi. Նույն արձանագրության 9-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից և առաջարկել կնքել ՋՋԷՌ-440 (Վ-270) տիպի ռեակտորային կայանքով ՀԱՅԿԱԿԱՆ ԱԷԿ-Ի թիվ 2 էներգաբլոկի սարքավորումների և խողովակաշարերի հիմնական մետաղի, եռակցվածքների և մակահալվածքների վիճակի՝ շահագործման երկարացված ժամկետի ընթացքում շահագործական վերահսկման տիպային ծրագրի մշակում» ծառայության մատուցման պայմանագիր:

vii. 13.04.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և անգործության ժամկետ չի սահմանվել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները:

viii. 19.04.2021թ.-ին Պատվիրատուն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուղարկել է «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ին:

ix. Ռուսաստանի Դաշնության Նախագահի 23.04.2021թ. թիվ 242 հրամանով ՌԴ-ում 04.05.2021թ.-ից մինչև 07.05.2021թ.-ը ներառյալ հայտարարվել է ոչ աշխատանքային օրեր:

x. 11.05.2021թ.-ին պայմանագրի ստորագրված տարբերակը և բանկային երաշխիքները «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն ուղարկել է Պատվիրատուի էլ. փոստին:

xi. Հանձնաժողովի 02.06.2021թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պայմանագրի ստորագրված տարբերակը և պայմանագրի ու որակավորման ապահովումները չի ներկայացրել, ինչով պայմանավորված Հանձնաժողովը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ

հոդվածի 3-րդ մասով և 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետերով, որոշել է գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

xii. 04.06.2021թ.-ին գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է չկայացած գնման ընթացակարգի մասին հայտարարություն. սահմանված ժամկետում պայմանագիր չի ներկայացվել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի կողմից 30.06.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ նեթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային

եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ՋՋԷՌ-440 (Վ-270) տիպի ռեակտորային կայանքով Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի սարքավորումների և խողովակաշարերի հիմնական մետաղի, եռակցվածքների և մակահալվածքների վիճակի՝ շահագործման երկարացված ժամկետի ընթացքում շահագործական վերահսկման տիպային ծրագրի մշակման ձեռքբերման նպատակով 19.03.2021թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21» ծածկագրով բաց մրցույթի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 9.5-րդ կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ՋՋԷՌ-440 (Վ-270) տիպի ռեակտորային կայանքով Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի սարքավորումների և խողովակաշարերի հիմնական մետաղի, եռակցվածքների և մակահալվածքների վիճակի՝ շահագործման երկարացված ժամկետի ընթացքում շահագործական վերահսկման տիպային ծրագրի մշակման ձեռքբերման նպատակով 19.03.2021թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21» ծածկագրով բաց մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրած «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում: Նույն դիմում-հայտարարությամբ Ընկերությունը հայտնել է, որ հանդիսանում է ՌԴ ռեզիդենտ՝ նշելով գործունեության հասցեն՝ ք. Մոսկվա, Շարիկոպոդշիպնիկովսկայա փ., 4 շ., 9-րդ հատված, սենյակներ 5, 5Ա և 6:

Հանձնաժողովի 12.04.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատելվել է բավարար և Հանձնաժողովը որոշել է «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից՝ առաջարկելով կնքել ՋՋԷՌ-440 (Վ-270) տիպի ռեակտորային կայանքով ՀԱՅԿԱԿԱՆ ԱԷԿ-Ի թիվ 2 էներգաբլոկի սարքավորումների և խողովակաշարերի հիմնական մետաղի, եռակցվածքների և մակահալվածքների վիճակի՝ շահագործման երկարացված ժամկետի ընթացքում շահագործական վերահսկման տիպային ծրագրի մշակում» ծառայության մատուցման պայմանագիր:

13.04.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և անգործության ժամկետ չի սահմանվել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները:

19.04.2021թ.-ին Պատվիրատուն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուղարկել է «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ին:

Ռուսաստանի Դաշնության Նախագահի 23.04.2021թ. թիվ 242 հրամանով ՌԴ-ում 04.05.2021թ.-ից մինչև 07.05.2021թ.-ը ներառյալ հայտարարվել է ոչ աշխատանքային օրեր:

11.05.2021թ.-ին պայմանագրի ստորագրված տարբերակը և բանկային երաշխիքները «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն ուղարկել է Պատվիրատուի էլ. փոստին:

Հանձնաժողովի 02.06.2021թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պայմանագրի ստորագրված տարբերակը և պայմանագրի ու որակավորման ապահովումները չի ներկայացրել, ինչով պայմանավորված Հանձնաժողովը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով և 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետերով, որոշել է գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

04.06.2021թ.-ին գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է չկայացած գնման ընթացակարգի մասին հայտարարություն. սահմանված ժամկետում պայմանագիր չի ներկայացվել:

Վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ՋՋԷՌ-440 (Վ-270) տիպի ռեակտորային կայանքով Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի սարքավորումների և խողովակաշարերի հիմնական մետաղի, եռակցվածքների և մակահալվածքների վիճակի՝ շահագործման երկարացված ժամկետի ընթացքում հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 19.04.2021թ.-ին Բողոքաբերին ուղարկված ծանուցմամբ, վերջինիս տրված տասն աշխատանքային օրյա ժամկետը ավարտվում էր ոչ թե 03.05.2021թ.-ը ներառյալ, ինչպես նշվել է 02.06.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ, այլ մինչև 11.05.2021թ.-ը ներառյալ, քանի որ «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն հանդիսանում է ՌԴ ռեզիդենտ, գործունեությունն իրականացնում է ՌԴ-ում, իսկ Ռուսաստանի Դաշնության Նախագահի 23.04.2021թ. թիվ 242 հրամանով ՌԴ-ում 04.05.2021թ.-ից մինչև 07.05.2021թ.-ը ներառյալ հայտարարվել է ոչ աշխատանքային օրեր:

Ինչ վերաբերում է 03.05.2021թ.-ին և 10.05.2021թ.-ին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ՌԴ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի համաձայն՝ մայիսի 1-ը և 9-ը համարվում են հանգստյան տոն օրեր և եթե հանգստյան օրն ու ոչ աշխատանքային օրը համընկնում են, ապա հանգստյան օրը տեղափոխվում է տոն օրվան հաջորդ աշխատանքային օրը: Ուստի մայիսի 1-ը և 9-ը օրենքի հիման վրա տեղափոխվել են մայիսի 3-ին և 10-ին՝ որպես ոչ աշխատանքային օրեր:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովը 02.06.2021թ.-ին հրավիրելով նիստ և կայացնելով Բողոքաբերի հայտը մերժելու մասին որոշում, գործել է ոչ իրավաչափ, քանի որ մասնակցի կողմից պայմանագրի

ստորագրված տարբերակը, պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացվել էր Օրենքով սահմանված 10 աշխատանքային օրյա ժամկետում՝ 11.05.2021թ.-ին:

Պետք է արձանագրել նաև, որ Պատվիրատուն Ընկերության ներկայացուցչի հարցման ի պատասխան հայտնել է, որ պայմանագրի, որակավորման և պայմանագրի ապահովումների սկանավորված տարբերակները ընդունելի կլինեին մինչև 03.05.2021թ.-ը և պայմանով, որ հնարավորինս սեղմ ժամկետներում մասնակիցը կփոխանցեր այդ փաստաթղթերի բնօրինակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ օրենսդիրը, պայմանագրի ապահովում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 10 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ պայմանագրի և որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորությունները: Ուստի Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից պայմանագիր կնքելուց հրաժարվելու մասին:

Ամբողջացնելով վերոգրյալները, Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ, նման պայմաններում, եթե առկա է Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների խախտում, ապա դրանից բխող ցանկացած գործողություն, ինքնաբերաբար դառնում է անհիմն կամ խախտմամբ կատարված:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, գնահատելով ու հետազոտելով գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ Հանձնաժողովի քարտուղարի էլ. հասցեին Ընկերության կողմից ուղարկված նամակը, Պատվիրատուի կողմից Բողոքներ քննող անձին տրամադրած Ընկերության կողմից ուղարկված և ստացված պայմանագրի, որոկավորման և պայմանագրի ապահովումների սկանավորված տարբերակները, Հանձնաժողովի 02.06.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությունը՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրակացության, որ գնահատող հանձնաժողովի 02.06.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումները չեն բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից և միտված չեն ապահովելու գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացմանը:

Ուստի Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և պետք է բավարարել՝ վերականգնելով Բողոքաբերի, որպես գնման գործընթացի հաղթող /ընտրված/ մասնակցի պայմանագիր կնքելու իրավունքը, որի արդյունքում կապահովվի Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի դրույթով սահմանված սկզբունքների կիրառումը, այն է՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

Անդրադառնալով բողոքի՝ «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու մասին ներկայացված պահանջին, Բողոքներ քննող անձը գտնում է, որ այն անհիմն է, այն փաստի հաշվառմամբ, որ Բողոքաբերի հետ պայմանագիրն ենթակա է կնքման Օրենքի 35-րդ, 36-րդ հոդվածների և Կարգի 50-րդ կետի դրույթներով սահմանված պահանջների պատշաճ կատարմամբ, այն է՝ պայմանագրի, պայմանագրի կատարման և որակավորման ապահովումների պատշաճ գնահատման արդյունքում, որն Օրենքի 26-րդ հոդվածի հիման վրա իրականացնում է գնահատող հանձնաժողովը:

Ինչ վերաբերում է բողոքի մյուս՝ պատվիրատուին և/կամ լիազոր մարմնին թիվ «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման չգանձելուն պարտավորեցնելու պահանջին, ապա Բողոքներ քննող անձը գտնում է, որ այն ևս անհիմն է, քանի որ Պատվիրատուն 10.06.2021թ.-ին թիվ Ե/40/1480-21 գրությամբ արդեն իսկ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանն ու տեղեկացրել գնման ընթացակարգի շրջանակներում «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի կողմից ստանձնած պարտավորությունների խախտման մասին: Ինչպես նաև հարկ է նկատել, որ Օրենքի 50-րդ հոդվածի դրույթներով սահմանված չէ որևէ լիազորություն, որով Բողոքներ քննող անձն օժտված լինի լիազորված մարմնի գործողությունների կամ անգործության վերաբերյալ որոշում ընդունելու իրավասությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի կողմից 30.06.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/58 ծածկագրով բողոքը բավարարել մասնակիորեն:

Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել ընթացակարգը չկայացած հայտարարելու և 02.06.2021թ.-ի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշումները:

Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**